



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 10-Լ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 06-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասով և 43-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011թ. ապրիլի 26-ի «Դատավորների կնիքների, դրոշմակնիքների գծապատկերները և դատական գործի էջերի վավերացման կարգը հաստատելու մասին» թիվ 06-Լ որոշման 1-ին հավելվածը լրացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Սպարտակ Գրիգորյանի անվամբ կնիքի գծապատկերով՝ համաձայն հավելվածի:

**ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ԱՎԱԳՅԱՆ

13 հուլիսի 2011թ.

ք. Ստեփանակերտ